ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հ. Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

XX դարի առաջին քառորդի հայ ականավոր մտքի ներկայացուցիչներից էր պատմաբան, հրապարակախոս, դրականագետ, հասարակական և քաղաքական գործիչ Դավիթ Անանունը, որի գործունեության և գիտական ժառանգության գնահատման խնդրում առաջին քայլը կատարեց Ա. Վիրաբյանը[1]։

Դավիթ Օհանի Տեր-Դանիելյանը ծնվել է 1879 թ. Արցախի Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղում։ Նա ապրել ու աշխատել է Բաքվում, Թիֆլիսում և Երևանում, խմբագրել է թերթեր և հանդեսներ, կատարել այլ ծառայություններ, իսկ հետագայում, խորհրդային իշխանության տարիներին, որպես այլախոհ, պատիժը կրելուց հետո, ԽՍՀՄ միացյալ պետքաղվարչության հատուկ խորհրդակցության որոշմամբ զրկվելով Մոսկվայի, Պետերբուրգի մարզերում, Թարկովի, Կիևի, Օդեսայի օկրուգներում, Դաղստանում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում ապրելու իրավունքից[2], *կյանքի վերջին տարիներին ապրել է Լենինգրադում, ապա՝ Աստրախանում։*

Սակայն, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Դավիթ Անանունը գերադասել էր մնալ հայրենիքում, նպաստել նրա բարգավաճմանը, ուստի շատերի նման չգնաց արտասահման։ Չգնաց, որովհետև ցանկացավ աշխատել Հայաստանում, իսկ հետո, երբ ուզեց գնալ, չթողեցին։

Դավիթ Անանունը ունեցել է գաղափարական շատ հակառակորդներ, որոնք պայքարել են նրա դեմ «աջից» և «ձախից»՝ նրան տալով «ազգայնամոլ», «հակահեղափոխական», «հակախորհրդային» և նման պիտակներ։ Դավիթ Անանունը, ինչպես գրում է Ստեփան Շահումյանը, սկզբում հարում էր հնչակյաններին, ապա՝ դաշնակցությանը, իսկ 1905 թվականից՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը (ՍԴԲՀԿ) և դառնում նրա գաղափարախոսը[3]։

Ինչպես ռուսական առաջին հեղափոխությունը, այնպես էլ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Անանունը ընդունում է ուրախությամբ։ Նա իր մտերիմ ընկեր Գագիկ Պիճիկյանի հետ Բաքվում ձեռնամուխ է լինում «Բանվոր» թերթի հրատարակմանը։ Անանունի գործուն մասնակցությամբ 1917 թ. հոկտեմբերի 3—7-ը Թիֆլիսում գումարվում է հայ սոցիալ-դեմոկրատների համախորհուրդ, որին մասնակցում են Արամայիս Երզնկյանը, Արշակ Զուրաբյանը, Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ), Հայկ Ազատյանը և ուրիշներ, շուրջ 70 հոգի։ Համախորհուրդը որոշում է միավորել ուժերը՝ Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման համար։ Այդ առթիվ Արամայիս Երզնկյանը Անանունին 1917 թ. գրած մի նամակում հաղորդում էր. «Եվ պետք է հրապարակով շեշտել, որ համախորհրդի զգացմունքների ընթացքում տիրում էր մտքի ու զգացմունքի կատարյալ համերաշխություն»[4], *իսկ դրանում կարևոր դեր էին խաղում Անանունի գաղափարները։ 1920 թ. հունվարին Դավիթ Անանունը Ստեփան Զորյանի, Բախշի*

---

1 Ա. Վիրաբյան, Կյանք և ողբերգություն, Հայաստան, 20. X. 1991։

2 ՀՀ Ազգային Անվտանգության պետական վարչության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԱԱՊՎԱ), գ. 9373, թ. 100։

3 Ստեփան Շահումյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1976, էջ 373։

4 Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Դավիթ Անանունի ֆ., № 122, թ. 1—6։

Իշխանյանի, Յոլակ Խանզադյանի և մի խումբ այլ համախոհների հետ ձեռնամուխ են լինում Սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության հիման վրա Հայաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ) ստեղծմանը։ ՀՍԴԲԿ-ն հանդես է գալիս որպես Հայաստանի անկախության ջերմ կողմնակից և բացասաբար է վերաբերվում Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը։ Բայց երբ 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանը խորհրդայնացվում է, ՀՍԴԲԿ-ը դիմում է Հայաստանի հեղկոմին՝ պատասխանատվություն հայտնելով աջակցել նոր իշխանություններին։ Չնայած դրան, Դավիթ Անանունը մինչև իր կյանքի վերջը այդպես էլ չհամակերպվեց խորհրդային կարգերին՝ գտնելով, որ այն անժամանակ է և տնտեսական հիմք չունի։

Դավիթ Անանունը իրեն համարում էր մարքսիստ և սոցիալ-դեմոկրատ։ Նա թողել է գրական հարուստ ժառանգություն՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր մենագրությունը[5], «Բանվորական նոր օրենքները» գրքույկը[6] (որի համար ցարական կառավարությունը դատի տվեց նրան), ինչպես և հարյուրավոր հոդվածներ, գրախոսություններ, հրապարակումներ և նամակներ, որոնցում հետևողականորեն արծարծում է հայության հավաքման գաղափարը։

Հայտնի է, որ XIX դ. հայ առաջավոր մտքի ներկայացուցիչներ Խ. Աբովյանը, Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Գ. Արծրունին, Ռաֆֆին և ուրիշներ յուրովի են արծարծել հայահավաքման գաղափարը (հայահավաքման գաղափարը երբեք չպետք է նույնացնել ազգային միասնության գաղափարի հետ)։ Դավիթ Անանունը, զարգացնելով Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ առաջ քաշված պատվիրանը՝ ազգության «ներքին և արտաքին» խորհուրդը տնտեսական խնդիրն է, ընդգծում է, որ գրա համար ամենակարևորը ընդհանուր տարածքային պատվանդանի ստեղծումն է։ Այդ գաղափարը Անանունի մոտ ավելի է կազմավորվում, միս ու արյուն ստանում մանավանդ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Կապված այդ հարցի հետ՝ Անանունը, ի հակակշիռ հայ խոշոր բուրժուազիայի, որը «միշտ խորթ է եղել իր ազգին, անտարբեր նրա հոգսերին», հայության ողնաշարը համարել է հայ գյուղացիությանը, որը «ազգի ֆիզիկական ուժն է, բայց ոչ հոգևոր»։ Անանունի հայացքով ազգային կյանքում բացառիկ տեղ է գրավում հայ բանվորությունը, որը պետք է լինի հայության հավաքման հիմնական ուժը, իսկ մենագրության եզրափակման մեջ այդ դերը տվել է հայ քաղաքական կուսակցություններին։

Դավիթ Անանունը հայահավաքման իր գաղափարը ամբողջական ու կուռ ձևով շարադրել է եռահատոր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության մեջ։ Եվ հավատարիմ մնալով իր դավանանքին, նա չէր ընդունում դրանից ներմուծված գաղափարները։ «Եվ դա այն պատճառով,—բացատրում է նա,—որ մեր խորին համոզմունքով որևէ գաղափար, եթե նա դրսից է գալիս չի կարող մասսայական գործի ծնիչ դառնալ, երբ բացակայում են համապատասխան հասարակական-տնտեսական պայմանները՝ այդ գաղափարի ընդունելության և արգասավորման համար»։ Անանունին «ավելի շատ շահագրգռել է եղածը և ոչ թե այն, որ ներմուծել է»[7]։ Հայահավաքման խնդրում նա կարևորում էր մի շարք գործոններ, ինչպես՝ հայոց գիրն ու լեզուն, անտեսական և հոգևոր ուժը, ազգային ինքնագիտակցությունը, ազգային եկեղեցին ու պատմությունը, հայկական տարածքների միավորումը։ Այդ ամենի հիմքում նա տեսնում էր անկախության անհրաժեշտությունը։

---

5 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, 1800—1870, հ. 1, Բաքու, 1916, հ. 2, (1870—1900), էջմիածին, 1922, հ. 3, (1901—1918), Վենետիկ, 1926։

6 Դ. Անանուն, Բանվորական նոր օրենքները, Բաքու, 1914։

7 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 1, էջ 1։

Դավիթ Անանունին շատ էր մտահոգում պատմական այն եղելությունը, որ հայությունը, որպես «մարդկային ցեղի մի հատուածն», դարեր շարունակ պրկված է եղել «հնարավորությունից՝ ապրել և զարգանալ աղատ օտարի բիրտ ազդեցությունից, լինի քաղաքական թե կուլտուրական»[8]։ «Դժբախտություն էր,—եզրակացնում էր Անանունը,—որ հայությունը չկարողացավ ապրել ու զարգանալ ինքն անկախ կյանքով, տպա այդ գերագույն դժբախտությունն ավելի ևս խտացավ, երբ նրան վիճակվեց ենթարկվելու կուլտուրապես իրենից ցածր մի ելաճռոլի»[9]։

Հայահավաքման ճանապարհին ամենակարևոր խնդիրը Արևմտյան Հայաստանի վերամիավորումն էր Արևելյան Հայաստանի հետ։ Սակայն Անանունը խորը և հանգամանալից վերլուծությունից հետո հանգում է այն եզրակացության, որ հնչակյանների և դաշնակցականների պայքարը Արևմտյան Հայաստանում անժամանակ էր, և որ պայմանները հայերի համար աննպաստ էին, մանավանդ, որ ցարական Ռուսաստանը չէր պաշտպանում հայահավաքման գաղափարը։ Հայերը չկարողացան հաղթանակի հասնել և հայահավաքման գործընթացն արագացնել, որովհետև բացակայեց «քաղաքական իմաստությունը», և «հակառակորդի հզորությունը թեթև վերաբերմունքի արժանացավ, սեփական ուժերը գերագնահատվեցին»։ Այնուամենայնիվ, «այս սխալանքներով անգամ հայ գաղափարակիրները մասսայաշարժ դարձան»[10]։ Հայահավաքման գաղափարը ընդգրկեց ավելի մեծ շրջաններ, չնայած տրրված զոհերին։ Անանունը բացատրում է. «Պարգել պայքարի դրոշակ՝ նշանակում է անհամեմատ խոշոր զոհեր տալ վսեմության աստծուն։ Այդ վերջին ուղին ընտրեց մեր հասարակական եռանդը։ Եվ շնորհիվ այն նախճիրների, որ տեղի ունեցան հայկական ռազմական ճակատում, հիմնական հարցը մնաց անլուծելի և ավելի ևս մտահոգիչ»[11]։ Ասել է, թե Արևմտյան Հայաստանի միավորումը Արևելյան Հայաստանի հետ մնաց անիրագործելի, որի հետևանքն էին 300 հազար անմեղ զոհերը։ Իսկ երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, և մեծ վտանգ էր սպառնում արևմտահայությանը, Անանունը կրկին հնչեցրեց իր ձայնը, մանավանդ կամավորական ջոկատների կազմակերպման առթիվ։ Այն ժամանակ կամավորական շարժման նկատմամբ գոյություն ուներ երկու մոտեցում։ Հայ սոցիալիստ-հեղափոխականները (էսէռները) բանաստեղծ, քաղաքական գործիչ Լևոն Աթաբեկյանի գլխավորությամբ պաշտպանում էին առանձին կամավորական խմբեր ունենալու գաղափարը։ Սոցիալ-դեմոկրատները, այդ թվում և Դավիթ Անանունը, ընդհանրապես դեմ չէին հայ կամավորական խմբեր ունենալու մտքին, սակայն կարծում էին, որ հայ կամավորները պետք է մտնեն պետական բանակ, որպեսզի Թուրքիան առիթ չունենա հայ կամավորական խմբերը պատրվակելով իրագործել հայությունը բնաջնջելու իր հրեշավոր ծրագիրը։ Բացի այդ, Անանունը մտածում էր, որ ռուսահայության քաղաքական այն ուժերը, որոնք ցանկանում են արևմտահայությանը ապստամբեցնել թուրքական տիրապետության դեմ, նախ և առաջ պետք է իմանան նրանց ցանկությունը, պատրաստակամության չափը, նոր միայն դիմեն կոնկրետ գործողությունների։

Այդ գաղափարի դեմ առաջին պայքարողներից էր Բաքվում տպագրվող «Արև» թերթը։ Դեռևս 1914 թ. սեպտեմբերին, մինչև Անդրկովկասյան ռազմաճակատի բացվելը Անանունը իր «Անեղր ծանծաղամտություն» վերտառությամբ հոդվածում գրել է. «Եվ որպեսզի հայությունը չմատնվի ծանր կորուստների, որպեսզի նա խուսափի սխալներից ու պատուհասներից, նրա բոլոր բայլերը, բոլոր ջանքերը պիտի բխեն ազգի ճալամական կամքից։ Ամեն մի անջատ ու մասնակի գործ պիտի մերժվի...»[12]։ «Արևը» չհանդուրժեց Անանունին և

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, էջ 2։

10 Նույն տեղում, հ. 2, էջ 246։

11 Նույն տեղում, էջ 238։

12 Մշակ, 23. IX. 1914։

հապշտապ հանդես եկավ «Կեղծում եք» հոդվածով[13]։ Իսկ մեկ ամիս անց, երբ բացվեց Անդրկովկասյան ռազմաճակատը, «Արևը» կոչ է անում կազմակերպել հայ կամավորական ջոկատներ։ Սակայն, երբ Թուրքիայում իրականացվեց հայերի ցեղասպանությունը, ու ոչնչացան մեկ ու կես միլիոն հայեր, Անանունը չէր կարող լռել ու հանդուրժել։ Նույն «Արևը» այս անգամ փորձում էր ամեն կերպ արդարանալ և Արևմտյան Հայաստանում կատարվածի համար մեղադրել Անանունին, որն իբր պաշտպանում էր «մեծատուններին», այսինքն, հայ բուրժուազիային[14]։ Անանունը Արևմտյան Հայաստանում կատարվածի համար մեղավոր համարեց նաև Ռուսաստանին[15]։ Նման եզրահանգումը, անշուշտ, դուր չեկավ «Արևի» խմբագիր Ա. Առաքելյանին։ Եվ նա 1916 թ. հանդես եկավ «Հերթական անբարեխղճություն» վերտառությամբ հոդվածով[16]։ Առանց համոզիչ փաստերի նա փորձում է «հերքել» Անանունին և արդարացնել իր կուսակցության (ՀՅԴ) քաղաքականությունը աբեմտահայության նկատմամբ ու պաշտպանել Արևմտյան Հայաստանի հարցում ցարական Ռուսաստանի բռնած դիրքը։ Անանունը ինչպես այդ, այնպես էլ հետագայում իր հասցեին ասված մեղադրանքներին պատասխանեց 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում գումարված հայոց համախորհրդակցությունում ունեցած իր ելույթներում։ Դատապարտելով բոլոր նրանց, ովքեր թուրք բարբարոսներին առիթ տվեցին իրականացնելու հայերին բնաջնջելու իրենց ծրագիրը, նա համախորհրդից պահանջում էր «յուր դատապարտության խոսքն ասել պատասխանատու գործիչներին. նրանք պետք է դուրս գան գործելու շրջանից»[17]։

«Ռուսահայերի հասարակական զարգացումը» դիրքը, որտեղ հեղինակը «տնտեսական մատերիալիզմի» դիրքերից հանգամանորեն շարադրել է արևելահայերի հասարակական-քաղաքական և մշակութային զարգացման պատմությունը՝ հիմնական լեյտմոտիվ ունենալով հայերի ազգահավաքման գաղափարը, ժամանակակիցների կողմից արժանացավ հակասական գնահատականի։ Այսպես. ձախակողմյան թևը պաշտպանում էր Անանունի հայահավաքման գաղափարը և գտնում, որ այն պետք է իրագործվի։ Հ. Սուրխաթյանը 1916 թ. հուլիսի 9-ին Անանունին գրում է. «Իբրև գործ, ուսումնասիրություն, իր տեսակի մեջ առաջինն է մեր դրականության մեջ և եզակի...»[18]։ Սուրխաթյանը ծավալուն գրախոսությամբ հանդես է գալիս «Մշակում»[19], որտեղ շեշտում է, որ Անանունի լույս ընծայած այս ստվար հատորը «առաջինն է, որ հայ ժողովրդի պատմական զարգացման ուսումնասիրությանը մոտենում է այդ ժողովրդի ծոցում գոյություն ունեցող տարբեր դասերի տնտեսական և հասարակական փոխհարաբերությունների տեսակետով»։ Սուրխաթյանի գնահատմամբ՝ Անանունը «մեր երիտասարդ պատրաստված գրողներից մեկն է, որ օժտված է զգաստ մտքով և զորեղ թափանցությամբ»[20]։

Հայահավաքման գաղափարը լիովին պաշտպանում էր նաև Վահան Տերյանը։ Անանունի դիրքը հայ դրականության մեջ համարելով «տչքի ընկնող երևույթ»[21] և «նկատի առնելով մեր ապրած ներկա ժամանակը՝ բանաս-

---

13 Արև, 1914, № 212—213, սեպտեմբեր։

14 Նույն տեղում, 1916, № 15, 17, հունվար։

15 Գործ (Բաքու), 1917, № 2, էջ 42։

16 Արև, 1916, № 119, 151—152։

17 Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917, սեպտեմբեր-հոկտեմբեր։ Փաստաթղթեր ու նյութեր (Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, № 1—2, էջ 89)։

18 ԴԱԹ, Դավիթ Անանունի ֆ., № 93, թ. 7։

19 Մշակ, 3. VIII. 1916։

20 Նույն տեղում, 2. VIII. 1916։

21 Վ ա հ ա ն Տ ե ր յ ա ն, Երկերի ժողովածու, Ե., 1935, հ. 4, էջ 376։ Վ. Տերյանի գրախոսությունը առաջին անգամ տպագրվել է «Армянский вестник» հանդեսում (1916 թ., № 42—43)։ Նույն հանդեսի 1916 թ. № 40-ում տպագրված Յա. Խաչատրյանցի գրախոսությունում նույնպես բարձր է գնահատվել Անանունի գիրքը՝ ռուսերեն հրատարակելու առաջարկով։

տեղծը շեշտում է, որ Անանունի առաջ քաշած գաղափարները «խոշոր նշանակություն են ստանում»[22]։ Գիրքը արժանացավ նաև Աշոտ Հովհաննիսյանի դրվատանքին։ 1918 թ. սեպտեմբերի 30-ին նա Անանունին գրել է. «Պայծառակերպդ իմ Դավիթ։ Շնորհակալ եմ գրքիդ համար։ Եկող տարվանից այդ աշխատությունը կմտցնեմ ճեմարանի լսարաններում, որպես նուիրական հայոց նոր պատմություն»[23]։ Մի քանի ամիս անց, 1917-ի հունվարի 24-ին, Աշ. Հովհաննիսյանը կրկին գրում է Անանունին. «Պատահական երևույթ չէ, անշուշտ, որ գու առաջինն ես սոցիալիստորեն մտածող հայ մտավորականներից, որ լուրջ ձգտում է ցույց տվել դնել հայ հեղափոխական դեմոկրատիայի հասարակական իդեալը նրա «գոյության ինքնօրինակ պատվանդանի» վրա. այդպես եմ ուզում ըմբռնել քո վերջին աշխատության իսկական նպատակը»[24]։

«Ռուսահայերի հասարակական զարգացումը» և թե նրա մի շարք հոդվածներ հրով ու սրով են ընդունում «Արևը», «Արարատը» և այլ պարբերականներ։ «Արևը» դեռեղում է ծավալուն գրախոսություն[25], որի գնահատականը տվեց Աշոտ Հովհաննեսյանը. «Կարդացի «Արևի» հոդվածաշարքը։ Բավական չէ, որ այդ կարճամիտները իրենք են տրաքում նախանձից և չարակամությունից, հիմա էլ խաղալով մեր մարդկային թուլությունների վրա, կամենում են մեզ վարակել նույն ախտով...»[26]։

«Ռուսահայերի հասարակական զարգացումը» 2-րդ գրքում հատուկ գլուխ է նվիրվել հայահավաքման խնդրին, որը XX դարում ստանում է չափազանց կարևոր նշանակություն, մանավանդ, երբ հարցականի տակ էր գրված հայ ժողովրդի գոյության հարցը։ Խորապես հարգելով ռուս ժողովրդին և գնահատելով նրա խաղացած դերը արևելահայության կյանքում, Անանունը միևնույն ժամանակ չէր հրաժարվում ցարական ինքնակալության մեծապետական շովինիզմը մերկացնելուց։ Նա համոզված էր, որ արևելահայությունը մեծ վնաս է կրում, որովհետև հեղափոխական պայքարում ամուր չէ նրա «ազգային շղարշը», որի հիմնական պատճառը «պատմական արատավոր» ժառանգությունն է և «ռուսական բուռն» քաղաքականությունը։ «Ռո՞ւս, թե հայ մնալ» հարցի պատասխանը «պիտի տար հավաքական հայությունը»[27], չնայած, որ այդ գաղափարը դեռևս «չէր տիրել հոգուն նյութական ուժ դարձած իր մտսսայացունց էությամբ»[28]։ Սակայն հայահավաքման գաղափարները (կուլտուրական վերածնունդ, նյութական հզորություն, հայրենիքի նվաճում) «երբևք մի մեծագործություն պսակելու չափով չտոգորեցին հայերին», որովհետև «ինքնօրինակ կերպով էր դասավորված հայ ժողովրդի տնտեսական կյանքը և դասակարգերի փոխհարաբերությունն այդ կյանքում»[29]։ Դավիթ Անանունի բնորոշմամբ՝ հայությունը վերջին մեկ դարում դարձել էր «դեբրաղանցապես կոոպերատիվ ազգ» և «Ռուսաստանը հնարավորություն էր տալիս հային իր տնտեսական կամքն արդասավորելու ընտրած վայրում և կամեցած բանվորական ուժերի միջոցով»[30]։ Եվ մի՞թե այսօրվա համար չէ ասված Անանունի հետևյալ միտքը. «Ռուսաստանը այն լայն հրապարակն է, որ տարերայնորեն բռնում էր հայի ձեռքից և նրան թափառման հրաման տալիս»[31]։

---

22 Նույն տեղում, էջ 377։
23 ԳԱՌ, Դավիթ Անանունի ֆ., № 101, թ. 2։
24 Նույն տեղում, № 74, թ. 4։
25 Արև, 1916, № 209—212։
26 ԳԱՌ, Դավիթ Անանունի ֆ., № 73, թ. 3։
27 Ռուսահայերի հասարակական զարգացումը. հ. 2, էջ 238։
28 Նույն տեղում, էջ 239։
29 Նույն տեղում, էջ 240։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում. էջ 241։

Ըստ Անանունի, «հավաքական հայության դրոշակակիրը ժողովրդական մտավորականությունը դարձավ՝ իր հայրենաշեն որոնումների և փորձերի համար պատվանդան ընտրելով բուն ժողովրդին»։ Հենց մտավորականները ցուցաբերեցին խիզախություն և «վերամկրտեցին հայի հոգին՝ նրան հայրենիքի տեր դարձնելու համար»[32]։

Հայահավաքման ձգտումը Անանունին հանգիստ չէր տալիս ցարական ինքնակալության տապալումից և, մանավանդ, Հայաստանում հայ պետականության վերահաստատումից հետո։ 1919 թ. մշտական բնակություն հաստատելով Երևանում՝ իրեն ամբողջովին նվիրեց հայահավաքման գաղափարի քարոզչությանը և իրականացմանը։ Նա դարձավ հայոց պետականության ամրապնդման ու հայկական պատմական տարածքների վերամիավորման ջատագովներից մեկը։ Խմբագրելով «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը և ակտիվորեն աշխատակցելով «Հառաջ» պարբերականին՝ Անանունը հրապարակում էր մեկը մյուսից կարևոր և հետաքրքիր, հրատապ հոդվածներ։ Այդ տարիներին Անանունը առանձին սրությամբ դրեց պատմական Արցախը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու խնդիրը։

Դ. Անանունը 1919 թ., երբ նոր էր տեղափոխվել Երևան, հրավիրվում է աշխատելու ՀՀ Ներգաղթի և վերաշինության վարչությունում։ Նա իր ծրագրային մտադրությունները շարադրում է հուլիսի 24-ին, վարչության վարիչ Ա. Մաքսապետյանին ներկայացրած զեկուցագրում. «Մեր կառավարության օրինական մտահոգությունը պիտի կազմե հայրենիքի նվաճումը։ Հայ տարրի ցիրուցան վիճակը պիտի գտնի իր վախճանը, և կառավարությունը համառ ու ծրագրված աշխատանքով պիտի գլուխ բերի հայահավաքման գործը։ Հայրենիքի նվաճումը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, եթե հայրենիքի սահմաններից դուրս մնացող հայության հատվածներն ու բեկորները դան ամփոփվելու մեզ բաժին մնացած տերիտորիայի վրա։ Դա էլ կլինի թերի գործ, եթե Հայաստանի տերիտորիայի վրա գտնվող հայությունը բնակության այնպիսի վայրեր չդրավե, որ դրանով անջատված լինի հայ տարրի քաղաքական-տնտեսական բարգավաճումն ու հզորացումը, ինչպես և պետականության հիմքերի ամրացումը... Մենք սակավաթիվ ժողովուրդ ենք և անթուլատրելի կլինի, եթե հայահավաքման գործը վարենք տարերային եղանակով, որ նշանակում է՝ թե՛ վտանգել ժողովրդի ֆիզիկականը և թե՛ պակաս նպատակահարմար գործ կատարել հայրենիքի նվաճման տեսակետից»[33]։

Դ. Անանունը իր բոլոր ունակություններով և հնարավորություններով քարոզում էր ամրապնդել և հզորացնել հավաքական հայության հայրենիքը, լայնորեն ծավալել արտադրությունը, ստեղծել հայրենիքը պաշտպանելու և անհրաժեշտության դեպքում թշնամուն հարվածող և զսպող բանակ, գաղդացնել մշակույթը, մանավանդ գրականությունը, ուշադրություն դարձնել հանրապետությունում փոքրամասնություն կազմող այլազգիների զարգացմանը և այլն։ Անանունը հավատում էր հայ ժողովրդի ապագային և լիովին վստահում նրան։ Եթե, նշում է նա, «պատմական դժնդակ պայմանները նրան պահել են խոնարհ վիճակում և չեն խրախուսել նրա հանճարը», ապա, «թողեք, որ կործանվեն մեզ կաշկանդող շղթաները—այն ժամանակ աշխարհն ու մարդկությունը կտեսնեն մեր գործը և կլսեն մեր խոսքը»։ Հետևապես՝ «Աշխատանք, առանց վհատության և առանց երկյուղի։ Պարտությունները չէ, որ մեզ բաժին են վիճակված։ Մեզ սպասում է հաղթանակի արբեցումը»[34]։ Եվ ապա՝ «Հայ ազգը հավաքական ամբողջություն է։ Հայ հայրենիքը ապահով անկյուն չունե մեր արգյունաբերության և կուլտուրական շինարարության համար։ Օտարի դիմազուրկ դարձնող լծի շնորհիվ նա իր միջից վտարում էր ձեռներեց և ինքնագործ անհատներին, վտարում էր դեպի աշխարհի

32 Նույն տեղում, էջ 216։

33 ԳԱԲ, Դավիթ Անանունի ֆ., № 6, թ. 1։

34 Հայաստանի կոոպերացիա, 1919, № 14, էջ 419։

բոլոր ծայրերը, ուր բացակայում էր մահմեդական աշխարհի խժդժությունը և կործանարար շունչը»[85]։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Դավիթ Անանունը, մնալով Հայրենիքում, շարունակում է բեղմնավոր աշխատանք կատարել։ Սկզբում աշխատում էր Հայաստանի պարենավորման ժողկոմիսարիատում՝ որպես կուլտուր-լուսավորական բաժնի քարտուղար։ 1919 թ. հուլիսին էջմիածնի Կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեկտիվը նրան ընտրում է ինստիտուտի գիտական աշխատակից, իսկ 1923 թ. փետրվարից մինչև 1926 թ. ամառը ղեկավարում էր ՀԽՍՀ հեղափոխության թանգարանը։ Լծվելով գիտական և հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության՝ Անանունը մի կողմից արժանանում է հարգանքի, սակայն վաստակում է նաև հակառակորդներ։ Երբ 1921 թ. մայիսին Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը արդարադատության ժողկոմ Ա. Կարինյանի գլխավորությամբ մեկնում է Զանգեզուր՝ բանակցություններ վարելու Լեռնահայաստանի կառավարության հետ, պատվիրակության կազմում էր նաև Դավիթ Անանունը։ Այդ օրերին Ստեփան Զորյանը գրում է Անանունին. «Հայ ժողովուրդը մեծ հույսեր է կապում քեզ հետ այն իմաստով, որ քո առաքելությամբ կարող ես նվազեցնել ժողովրդին սպառնացող աղետը։ Կղերականից սկսած մինչև կոմունիստ համոզված են, որ հանդես կբերես քաղաքական մի այնպիսի իմաստություն, որ կհաշտեցնես անհաշտելին և ժողովուրդը (Զանգեզուրի)... Մի խոսքով՝ դու դառնում ես կամ ավելի շուտ դարձել ես համազգային դեմք»[86]։

1920-ական թթ. Դավիթ Անանունը տպագրում է մի շարք հետաքրքիր և արժեքավոր հոդվածներ, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» և «Նորք» հանդեսներում, «Ռուսահայերի հասարակական զարգացումը» աշխատության 2-րդ և 3-րդ հատորները, հանդես է գալիս դասախոսություններով, գրախոսություններով և այլն։ Սակայն Անանունի հին և նոր հակառակորդների շարքը հետզհետե ստվարանում է և ավելի վտանգավոր դառնում։ Նրա, ինչպես և մյուս այլախոհների շուրջ հյուսվում էր սարդոստայն. հակառակորդները նրանց վիրավորելու և ստորացնելու առիթներ էին որոնում։ Անանունի դեմ հրապարակայնորեն հանդես եկան Ս. Մանուցյանը[87], Ս. Երզնկյանը և ուրիշներ, որոնք մերժում էին Անանունի հայահավաքման գաղափարը, նրան անվանում «ազգայնամոլ» և խորհրդային հասարակության համար «վնասակար» անձնավորություն։

1926 թ. Վենետիկում հրապարակված «Ռուսահայության հասարակական զարգացումը» գրքի 3-րդ հատորի տպագրության լուրը սվիններով են ընդունում Հայաստանի և Ադրբեջանի ղեկավար շրջանները։ Անանունի դեմ «խաչակրաց արշավանք» է սկսվում դաշնակցական մամուլից մինչև խորհրդային մամուլը ներառյալ։ Այս նոր «Հատորի մեջ հեղինակը,—գրում է Աշ. Հովհաննիսյանը,—կամենում է ներկայացնել ռուսահայերի հասարակական զարգացման 1901—1918 թվականներն ընդգրկող շրջանը։ Կենտրոնական հարցը հեղինակի այս նախընթաց հատորներում «հայության հավաքման» խնդիրն է։ Այլ խոսքով՝ ռուսահայերի՝ որպես ազգության տնտեսաքաղաքական ինքնորոշման, նրանց «ազգաշինության» և ազգային քաղաքական «ազատագրման» պրոբլեմը։ Երրորդ հատորը հավակնում է տալ հենց հեղինա-

---

85 Նույն տեղում, № 16, էջ 482։

86 Տե՛ս Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ., 1022, ց. 2, գ. 100, թ. 19։

87 Ս. Մանուցյանը 1923 թ. կուսակցական աշխատանքի է ուղարկվում Լեռնային Ղարաբաղ։ Աշխատելով ԼՂ կուսակցական կոմիտեի քարտուղար, նպաստում է 1923 թ. ամռանը Արցախում անցկացված «հանրաքվեի» փաստաթղթերի կեղծմանը։ Նա խիստ բացասական դեր է խաղում մարզի տարածքը վերաձևելու և պատմական Արցախի հյուսիսային շրջանը մարզից անջատելու գործում։

կին զբաղեցնող պրոբլեմի լուծումը։ «Հայության հավաքման» հին պատգամը «ավարտում է իր աշխատանքը... 1918 թ. մայիսի 28-ին»[38]։

Անանունը իր աշխատության մեջ, թերևս ոչ տեղին և ոչ համոզիչ, կրկնամբում է հայ մարքսիստներին, որոնք տեր չկանգնեցին նախընթաց շրջանի «ազգային հեղափոխական շարժմանը», դրա համար էլ հայերը ողնաշարը չարդած մի ժողովուրդ դարձան, իսկ դաշնակցությունը նստած մնաց «հայության... ազգային զգացմունքների և անձև սպասումների խանձարուրի մոտ»[39]։ Անանունը բացատրում է, որ «մարքսիստների ազգաշինությունը կերպարանք չուներ, իսկ դաշնակցության գործելակերպի հաջող ու սուր քննադատությունը շրջանակ չէր դառնում, որ հայկական մեղուն իր մեղվաստը հյուսեր»։ Ապա՝ «մնաց, որ հեղափոխությունը, այսինքն, գործնականը լուծեր այն, և մարքսիստները գնան շարվելու պատրաստի սեղանի շուրջը»[40]։ Ահա սա է Դավիթ Անանունի աշխատության գաղափարական հենքը։

Փարիզում տպագրվող դաշնակցական «Հառաջ» թերթում[41] ընդարձակ գրախոսականով հանդես է գալիս Ս. Մասուրյանը։ Նա գրում է, որ «Դ. Անանունի խորհրդածություններու և պնդումների մեծագույն մասը կարելի չէ ընդունել առանց կասկածի և այդ ոչ միայն այն պատճառով, որ անհաշտ ու ծայրահեղ հակառակորդն է ՀՀ դաշնակցութեան գործեռուն, այլև, առհասարակ, կյանքը գունավոր ակնոցներով դիտող մեկն է։ Այս պատճառով անոր գրքին ընթերցանությունը դժվար և նույնիսկ վտանգավոր գործ մրն է...»։ Սակայն, շարունակում է գրախոսը, «մեկը, որ այնքան համարձակ է և անողոք, օրինակ, դեպի դաշնակցության թերությունները, բարոյական իրավունք չունի լռելու բոլշևիկներու գործած անհամեմատ ավելի ծանր հանցանքներուն հանդեպ»։ Բայց և այնպես, եզրափակում է Մասուրյանը, Անանունի աշխատությունը «ունի արժեքավոր մասեր ու տեղ-տեղ ներշնչված բարձր հայրենասիրությամբ ու խորունկ հավատքով դեպի հայ ժողովրդի փրկություն ապագան» և պատահական չէ, որ գրքի վերջին գլխում նա «կը փառաբանե Հայաստանի անկախությունը»[42]։

Եգիպտոսում հրատարակվող դաշնակցական «Հուսաբերը» սկզբում երկու ծավալուն առաջնորդողներ նվիրեց Անանունի գրքի 2-րդ և 3-րդ հատորներին, տպագրեց Արտաշես Աբեղյանի ծավալուն դոսախոսականը գրքի 2-րդ հատորի վերաբերյալ[43]։ «Հուսաբերը» հայտնել է նաև ծայրահեղ կարծիք, գրելով, թե Անանունը «շուրջ երեք տասնամյակ համառորեն, հաճախ կրքոտ և թունաւից, պայքար մղած է ՀՀ Դաշնակցության դեմ՝ միշտ ալ փարած մնալով հանրային իր միևնույն դավանանքին»[44]։

Անանունի և նրա գրքի մասին այլ կարծիք ուներ Արտաշես Աբեղյանը։ Նա գրում է, որ Դավիթ Անանունը անծանոթ դեմք չէ. նա «տիպիկ հայ մտավորական է, քաղաքական-հասարակական ու գիտական ակնավոր գործիչ ու հրապարակագիր», որը «գրեթե մի քառորդ դարուց ի վեր... կյանք է մաշում այդ ասպարեզներում» և որ հայ մարքսիստներից տարբերվում է նրանով, որ կազմակերպչական գործը դրել է «ազգային և ոչ թե միջազգային դետնի վրա, ինչպես որ վարվում էին մնայուն հայ մարքսիստները»[45]։

Բոստոնում տպագրվող «Հայրենիք» հանդեսը իր 1926 թ. նոյեմբեր, դեկտեմբեր և 1927 թ. հունվար ամիսների համարներում տպագրեց Մ. Վարդանյանի «Անաչառության ասպետը» վերտառությամբ ծավալուն և բացա-

---

38 Մարտակոչ, Թիֆլիս, 26. III. 1927։

39 Դ. Անանուն, Ռուսահայության հասարակական զարգացումը, հ. 3, էջ 411—412։

40 Նույն տեղում, էջ 412։

41 Հառաջ (Փարիզ), 22—29. III. 1926։

42 Նույն տեղում, 31. X. 1926։

43 Հուսաբեր, 27. VI. 1926, IX—X. 1926։

44 Նույն տեղում, 29. IX. 1926։

45 Նույն տեղում, 18. X. 1926։

սական դրախոսությունը[46]։ Թիֆլիսում տպագրվող «Մարտակոչ» թերթում Անանունի դեմ բավականին ընդարձակ «մեղադրանքով» հանդես եկավ Ս. Երզնկյանը (Ե. Սուրենի)՝ «Երկու տենդենց» վերտառությամբ հոդվածով[47], որում, Անանունի գիրքն անվանվում է «բամբասագիրք»[48]։ Իբրև պատասխան Ս. Երզնկյանի և ի պաշտպանություն Դավիթ Անանունի, նույն «Մարտակոչում» նույնպես ծավալուն հոդվածով («Զախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին»)[49] հանդես է գալիս Աշոտ Հովհաննիսյանը։ Հարցն այն է, որ Ս. Երզնկյանի հոդվածն ուղղված էր ոչ միայն Դավիթ Անանունի և Աշոտ Հովհաննիսյանի, այլև Հայաստանի կոմկուսակցության և հայ մտավորականության դեմ։ Հայաստանի կոմկուսակցության կենտկոմի նախագահությունը, 1927 թ. մարտի 6-ին ընդլայնված նիստում քննության առնելով Ս. Երզնկյանի հոդվածը, նշում է, որ Հայաստանի կոմկուսակցության դեմ առաջ քաշված մեղադրանքը «կտրականապես սերժում է, գտնելով այն միանդամայն չհիմնավորված»[50]։

Աշոտ Հովհաննիսյանը, որը փաստորեն հանդես էր եկել Հայաստանի կոմկուսակցության կենտկոմի անունից, իրավացիորեն գրում էր. «Դ. Անանունի հատորն ավելի շուտ գրական-քաղաքական ելույթի առիթ էր, քան բուն նպատակ»[51]։ Մի փոքր անց, երբ Անանունն արդեն գտնվում էր բանտում, իսկ Աշոտ Հովհաննիսյանը ազատվեց դրաղեցրած պաշտոնից, ՀԿԿ կենտկոմի քարտուղար Հայկ Հովսեփյանը հիմնավորում էր բռնությունները, նշելով, թե «Այնպիսի սպեցիֆիկ-մենշևիկներ, ինչպես Դավիթ Անանունը, պրոլետարական հեղափոխության և խորհրդային իշխանության կատաղի թշնամիներ են»[52]։ Ս. Կասյանը իր «Սպեցիֆիկները և սպեցիֆիդմը»[53] գրքում, հարվածի հիմնական նետը ուղղելով Դավիթ Անանունի դեմ, գրում է. «Հեղափոխական մարքսիզմ-բոլշևիզմի հետ կռվի բռնվողները ոչ թե ռուբենինյան սպեցիֆիկներն են, որոնք պայքարի էին բռնվում միմիայն դաշնակցության հետ, այլ միայն անանունյան սպեցիֆիկները...»։ Կասյանը չի ժխտում, որ «ռիբացու Դավիթը քիչ չի նիզակներ կոտրել դաշնակների դեմ»[54]։

Դավիթ Անանունի քաղաքական կյանքում յուրահատուկ տեղ են գրավել նրա և Աշոտ Հովհաննիսյանի գաղափարական և անձնական կապերը, որ սկսվում են նախահեղափոխական տարիներից։ 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. հունիսը Անանունը և Ստեփան Զորյանը Երևանում ապրում էին Խորհրդային Հայաստանի առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի բնակարանում, իսկ 1923-ին Անանունը Խորհրդային Հայաստանի հեղափոխության թանգարանի տնօրեն է նշանակվում արդեն կուսակցության կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի երաշխավորությամբ։ Անանունի «Ռուսահայության հասարակական զարգացումը» գրքի 2-րդ հատորը լույս է տեսել գործալ Աշոտ Հովհաննիսյանի անմիջական երաշխավորությամբ։ Հետագայում հարցաքննությունների ժամանակ Աշոտ Հովհաննիսյանը մեղադրվել է ամենից առաջ Դավիթ Անանունին հովանավորելու համար։ Դ. Անանունի և Աշ. Հովհաննիսյանի հակառակորդները հնարավոր բոլոր միջոցները գործադրում էին մբոտելու և ֆիզիկապես ոչնչացնելու նրանց։ Իսկ դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Ստալին-Տրոցկի պայքարը մոտենում էր գագաթնակետին։ Դ. Անանունի հասցրած ապտակը, թվում է, չէր

---

46 Հայրենիք, 1926, № 1 (նոյեմբեր), էջ 69։

47 Մարտակոչ, 1927, № 26—39 (փետրվար)։

48 Նույն տեղում, № 26։

49 Նույն տեղում, № 67—70 (մարտ)։

50 ՀՀ ՀԿԿՊԱ, ֆ. 1, ց. 7, ղ. 28, թ. 33։

51 Մարտակոչ, 1927, № 67։

52 Заря Востока. 7. VIII. 1927.

53 Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիդմը, Թիֆլիս, 1928։

54 Նույն տեղում, էջ 154։

մոռացել ազգային հարցի «գիտակ» Ստալինը։ Դեռևս 1913 թ. Անանունը «Նոր հոսանք» հանդեսի 6-րդ համարում, «Դարձյալ ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածում, քննության է առնում Ստալինի «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածը[55] և հանգում հետևյալ եզրակացության. «Ազգերի ինքնորոշման վերաբերյալ Ստալինի հոդվածը մի արժանիք ունի՝ շատ բան խոստանալ և զարմանալի կերպով խոստացածը մերժել... Ուղղակի մարդ ապշում է, թե ինչ աստիճանի կարող է հասնել անիմաստ շաղակրատությունը։ Փքուն խոստումներ, անվերապահ հայտարարություններ և ապա նահանջ ամբողջ գծի վրա։ Վերջ ի վերջո «հետևողական» մարքսիստ Ստալինը ազգային հարցի լուծումը գտնում է երկրի ռամկավարության մեջ։ Եվ եթե խոսքի սահմանը այդտեղ պիտի լրանար, էլ ինչ կարիք կար երկար ու բարակ ծամծմել ազգային ինքնորոշում դարձվածքը», և «Ստալինը թալանում է ազգային ինքնորոշման պահանջը»[56]։

Դավիթ Անանունի ձերբակալվելուց դեռևս չորս ամիս առաջ, 1927 թ. մարտի 25—27-ը, տեղի էր ունեցել Հայկոմկուսի կենտկոմի չորրորդ պլենումը, որը լսում և քննարկում է գաղափարական հարցի վերաբերյալ կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը։ Ելույթներում հնչում է այն մեղադրանքը, թե իբր Հայաստանում պայքար չի մղվում սպեցիֆիզմի դեմ, փորձեր են արվում այն պատմականորեն արդարացնելու և ժողովրդականացնելու համար, իսկ դրան հակառակ, ստվերի մեջ են թողնվում բոլշևիկյան պատմությունը և նրա պատմական դեմքերը։ Նաև նշվում է, որ Երևանի «Երիտասարդ մարքսիստների» կազմակերպությունը ունեցել է «սպեցիֆիկյան գունավորում»[57]։ Դրեթե միաբերան շեշտում են, որ «սպեցիֆիկյան գունավորում» ունեն Դավիթ Անանունի, Յոլակ Խանդազյանի և այլոց գրվածքները, հենց նրանք են «խեղաթյուրում մեր պատմությունը»[58]։ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Ա. Կարինյանը, իր ելույթում քննադատության ենթարկելով Ս. Երզնկյանին, նրա հոդվածը համարում է միտումնավոր, որովհետև Հայաստանում սպեցիֆիզմը պատկանում է անցյալին։ Այնուհետև, նշում է, որ Անանունի գոքի 2-րդ և 3-րդ հատորների հրատարակումից հետո ոմանք պահանջում են նրան աքսորել կամ ձերբակալել, որը առայժմ հիշտ չէր լինի։ Ուրիշ բան է, շարունակում է նա, նրան քննադատել և խարազանել, քանի որ իրոք «Դ. Անանունը հանդիսանում է վտանգավոր դեմք» և «ազդեցություն ունի երիտասարդության վրա»։ Եթե «նրա դեմ չտանենք գաղափարական ակտիվ պայքար, այդ դեպքում ես համաձայն եմ այն ընկերների հետ, որոնք պահանջում են նրան աքսորել։ Նա մեզ համար վնասակար դեմք է, նա խարազանում է այն մտավորականներին, որոնք մեզ հետ են»[59]։

Առանձնապես թունոտ էր Մ. Օրախելաշվիլու ելույթը, որը հատուկ հանձնարարությամբ եկել էր Թիֆլիսից։ Պլենումի ամբիոնից նա հայտարարում է, որ եթե «մինչև հիմա դուք չեք ոչնչացրել Դավիթ Անանունին» և «արմատախիլ չեք արել հայկական սպեցիֆիզմը», ապա «հիմա պետք է արվի»[60]։ Ասված է հստակ և կոնկրետ։ Հետևապես, հայ մտածող և իր խելամտությամբ շատերի նախանձը շարժող Դավիթ Անանունը այս երկնքի տակ ապրելու իրա-

---

55 Ստալինի հոդվածը տպագրվել էր «Просвещение» հանդեսի 1913 թ., № 3, 4 և 5-ում։

56 Նոր հոսանք, Թիֆլիս, 1913, № 6, էջ 1065։

57 Երևանի համալսարանում 1924—25 թթ. գործել է «Երիտասարդ մարքսիստների» կամ «Պլեխանովյան» խմբակ, որը ղեկավարում էր Սարեն Մխիթարյանը։ 1925 թ. ձերբակալվում են խմբի անդամները, որոնք հիմնականում կոմերիտական ուսանողներ էին։ Նրանք մեղադրվում էին «ազգայնամոլությամբ» և «հակախորհրդային» գործունեության համար։ Հետագայում Անանունին մեղադրում են այդ խմբակին ղեկավարելու համար։

58 ՀՀԿԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թ. 33—39։

59 Նույն տեղում, թ. 59։

60 Նույն տեղում, թ. 73։

վունք չունեն։ Թանդարանի անօրինությունից ազատված, ամբողջ մեկ տարի առանց աշխատանքի մնացած Անանունը 1927 թ. ամռանը երկու անդամ մեկնում է Թիֆլիս՝ աշխատանք որոնելու կամ էլ արտասահման փոխադրվելու թույլտվություն ստանալու։ Նրան մերժում են, հուլիսի 28-ին ձերբակալում և նետում բանտ։ Հարցաքննության ժամանակ քննիչը նրան հարցնում է. «Եթե, իրոք, հակահեղափոխական անձնավորություն եք, ապա ինչո՞ւ եք 1919—1920 թվականներին ծառայել դաշնակցական կառավարությանը և ինչո՞ւ եք ցանկանում տեղափոխվել արտասահման»։ Անանունը պատասխանում է, որ ինքը իր «Ելույթներում, ինչպես և մամուլում, հրապարակային ռեֆերատներում պաշտպանել է կոալիցիոն կառավարությանը... և դատապարտել դաշնակցության մենաշնորհ իշխանությունը...»։ Սվ, չնայած նրան, շարունակում է Անանունը, որ դաշնակցությունը ունեցել է մենաշնորհ իշխանություն, այնուամենայնիվ «ես պաշտպանել եմ այդ կառավարությանը»։ «Խորհրդային իշխանության թերությունները ես գտնում էի ոչ թե նրա սոցիալական միջոցառումների, այլ նրա փափուկ քաղաքականության մեջ (առանձնապես Թուրքիայի նկատմամբ), որը Հայաստանին պահում է ճնշված վիճակում, նրան զրկելով իր վաղեմի տարածքից»[61]։ Անանունը արտասահման տեղափոխվելու իր մտադրությունը բացատրում է նրանով, որ վերջին յոթ տարում մի քանի կոմունիստների կողմից իր դեմ տարվող պայքարը իրեն հասցրել էր հուսահատության և դրա համար էլ նա գերադասում էր տեղափոխվել Պարսկաստան։ Այդ կոմունիստ կոչեցյալները թունավորում էին նրա կյանքը։ Ապա բացատրում է, որ ինքը՝ որպես հին մարքսիստ, լավ գիտեր սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ամբողջ անցյալը և հեղափոխական շարժման մեջ այդ անձնավորությունների «հաճախ վարակիչ» գործունեությունը։

Ստորև բերվում է 1927 թ. սեպտեմբերի 29-ի հարցաքննության արձանագրությունից մի հատված, որը պարզաբանում է Անանունի քաղաքական ըմբռնումները հայահավաքման, դաշնակցության, Հայաստանի անկախության և նրա ապագայի վերաբերյալ։

«Հարց—Դուք չե՞ք գտնում, որ դաշնակցական կուսակցությունը պետք է հեռանա պատմական ասպարեզից, և որ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ նրա վերաբերմունքը կործանարար է։

Պատ.—...Իմ կարծիքով դաշնակցությունը քաղաքական ասպարեզից կարող է հեռանալ միայն տարածքային հարցերը լուծելուց... և հայ ժողովրդին իր հայրենիքում հավաքելուց հետո... Այդ կուսակցության քաղաքական մահը չի կախված մեր սուբյեկտիվ ցանկություններից...

Հարց.—Դուք քաղաքական ինչպիսի՞ պահանջներ ունեք, որոնց չկատարումը Հայաստանի գոյությունը, որպես պետություն, անիմաստ է դարձնում։

Պատ.—...Հայաստանի, որպես պետություն, թերությունը կայանում է նրանում, որ դեռևս չի վճռված ազգային հարցը, ասել է թե՝ տերիտորիայի հարցը և հայ ժողովրդի հավաքումը Հայաստանում։

Հարց.—Ինչպե՞ս եք գնահատում դաշնակցականների 1921 թ. փետրվարյան ելույթը։ Դա եղել է խռովությո՞ւն, թե՞ ապստամբություն։

Պատ.—Դա եղել է ապստամբություն, ավելի ճիշտ՝ ժողովրդական լայն շարժում»[62]։

Սա հայ իրականության մեջ 1921 թ. փետրվարյան իրադարձությունների առաջին և ճիշտ գնահատականն է, որ տվել է աղդանվեր քաղաքական գործիչը, այն էլ խորհրդային բանտում։

«Կիսամենշևիկ և կիսադաշնակ Անանունը,—կարդում ենք մեղադրական եզրակացության մեջ,—իր հոդվածներով նպատակ էր հետապնդում Հայաստանում հասարակական կարծիքը բարձրացնել բոլշևիկների դեմ և ասպա-

61 ՀԱՊՎԱ, դ. 9373, թ. 30։

62 Նույն տեղում, թ. 30—34։

րեզից հեռացնել այդ կուսակցությանը... Նա Հայաստանում եղած ժամանակաշրջանում միայն շարաշահել է պատասխանատու կոմունիստների վստահությունը և իր դիրքը օգտագործել հակախորհրդային տրամադրություններով տարված երիտասարդների շրջանում (1923—1924 թթ.) և կապի մեջ էր Սուրեն Մխիթարյանի, Արաս Խաչակյանի, Խոնդկարյանի և ուրիշների հետ։ Նա ազդեցություն ուներ երիտասարդության վրա, կապված էր հոգևորականության, արտասահմանյան հակահեղափոխական ուժերի և այլ տարրերի հետ»։ Հետևապես՝ «Նրան ազատ թողնել Անդրկովկասում, ճիշտ չի լինի, կլինի վտանգավոր։ Նա, ազատ լինելով, կշարունակի իր հակահեղափոխական գործունեությունը»[63]։

Դավիթ Անանունը թե՛ բանտում և թե՛ աքսորավայրում շարունակել է գրել։ Ծննդով արցախցի, գրող և հրապարակախոս, Անանունին շատ մտերիմ Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյան) վկայում է, որ Անանունին վերջին անգամ տեսել է Բաքվում, 1937 թ., երբ մի քանի օրով եկել էր Աստրախանից։ Անանունը Արամայիսին ասել է, որ իր բոլոր ձեռագրերը գտնվում են Աստրախանում։ Արամայիսը գրում է նաև, որ արդեն 1942 թ. Անանունի ձեռագրերը գտնվում էին Բաքվում, բայց թե ում մոտ, մոռացել է[64]։

Դավիթ Անանունը, հարազատների վկայությամբ, իր գոյությունը պահելու համար աշխատում էր Աստրախանի արհեստանոցներից մեկում, ուր ձրկնոցական ցանցեր էին հյուսում։ Դեղերումներով լի նրա կյանքը ավարտվել է 1943 թ., դժբախտ պատահականությամբ։ Բժշկական օգնություն չստանալով՝ մահանում է մենակության մեջ և հողին է հանձնվում աստրախտնաբնակ համադյուղացի Հակոբ դայու կողմից։

Միայն 1989 թ. հետմահու արդարացվեց հայահավաքման հոլածված դաղափարախոսը, որը ոչ մի հակաօրինական արարք չէր կատարել։

ПОЛИТИЧЕСКАЯ СУДЬБА ДАВИДА АНАНУНА

Г. Б. АБРАМЯН

Резюме

Историк, публицист, общественный и политический деятель Давид Ананун (Давид Тер-Даниелян), являющийся одним из видных представителей армянской политической мысли первой четверти 20-го века, в своих многочисленных работах пропагандировал идею консолидации всех армян. Своей политической и теоретической деятельностью Ананун активно способствовал становлению первой Республики. Являясь одним из идеологов армянской социал-демократической рабочей организации, Д. Ананун полагал, что в деле консолидации армян важную роль призваны сыграть армянские политические партии и организации. Политические и идеологические взгляды Анануна встречали яростное сопротивление, что и привело в годы советской власти к его политическому и физическому уничтожению.

---

63 Նույն տեղում, թ. 50—60։

64 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 25։